

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0416.01.5 «ԱՌԵՎՏՈՒՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Պաշտոնի անվանումը /գբաղմունքի/	0416.01.01.5 «ԿՈՄԵՐՍԱՆՏ»
I. Դերը	«Առևտուր» մասնագիտության «Կոմերսանտ» որակավորմամբ մասնագետը իրականացնում է մանրածախ և մեծածախ առևտրում պարենային և ոչ պարենային ապրանքների առևտրային գործունեություն:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Շուկայի ուսումնասիրություն և վաճառքի նախապատրաստում	
Աշխատանքային գործընթացը	Ուսումնասիրում և վերլուծում է շուկայի զարգացման հեռանկարներն ու իրավիճակը, կազմակերպում ապրանքի մատակարարումը արտադրողներից, մեծածախ վաճառողներից, նախապատրաստում ապրանքը վաճառքի:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացահայտված են շուկայի զարգացման հեռանկարները, 2) շուկայում հետազոտված և վերլուծված է պահանջարկի ու առաջարկի հարաբերությունը, 3) կատարված է ապրանքի որակական, քանակական ընդունում և վաճառքի նախապատրաստում, 4) ձևավորված է վաճառքի սրահը, ցուցադրված ապրանքները՝ ապահովելով դրանց ճիշտ դասավորությունը (մերչնդայզինգ):
Խնդիրների բնագավառ 2. Ապրանքի ներկայացում և վաճառքի իրականացում	
Աշխատանքային գործընթացը	Ներկայացնում է ապրանքային տեսականին, իրականացնում է խորհրդատվություն և վաճառք:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) գնորդի պահանջարկը բացահայտված և բավարարված է, 2) իրականացված քաղաքակիրթ վաճառք և սպասարկում:
Խնդիրների բնագավառ 3. Հետվաճառքային սպասարկում և գնորդների հետ կապերի հաստատում:	
Աշխատանքային գործընթացը	Անհրաժեշտության դեպքում կազմակերպում է ապրանքի առաքման, հավաքման և տեղադրման աշխատանքներ, կատարում փաստաթղթային ձևակերպումներ երաշխիքային և հետերաշխիքային սպասարկման համար:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կատարված է ապրանքի առաքման, հավաքման և տեղադրման աշխատանքների կազմակերպումը, 2) կատարված են փաստաթղթային ձևակերպումներ երաշխիքային և հետերաշխիքային սպասարկման համար, 3) հաստատված է գնորդի հետ փոխադարձ կապ:

III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	Պատասխանատու է. <ol style="list-style-type: none"> 1. շուկայի ուսումնասիրման համար, 2. գործընկերային կապեր ձևավորելու համար, 3. ապրանքի մատակարարման և պահպանման համար, 4. վաճառքի կազմակերպման և խթանման համար, 5. համալիր սպասարկման կազմակերպման համար:
IV. Լեզուները	Հայերեն - լավ, երկու օտար լեզու (ռուսերեն, անգլերեն) - բավարար
V. Համակարգիչը	MS WORD, MS EXCEL ՀԾ-առևտուր, համացանց
VI. Գիտելիքները	Պետք է. <ol style="list-style-type: none"> 1. տիրապետի տնտեսագիտության, կառավարման և մարքեթինգի հիմունքներին, 2. տիրապետի ապրանքագիտության հիմունքներին, 3. տիրապետի առևտուրը կարգավորող օրենսդրական և նորմատիվային ակտերին, 4. տիրապետի վաճառքի տեխնիկային և հմտությանը /հաղորդակցություն, գործարար էթիկա/,
VII. Կարողությունները և հմտությունները	Կարող է. <ol style="list-style-type: none"> 1. կազմակերպել ապրանքների մատակարարումը, 2. կազմակերպել առք ու վաճառք, 3. կատարել առևտրային գործունեությանը վերաբերվող փաստաթղթային ձևակերպումներ:
VIII. Անձի որակական հատկանիշներ	Պետք է ունենա աշխատասիրություն, նվիրվածություն, կարգապահություն, ազնվություն, պատասխանատվություն, ինքնապահանջկոտություն, կոլեգիալ հարաբերությունների ճկունություն: Լինի մտածող, պարկեշտ, անկաշկանդ, հաղորդակցվող, մաքրասեր, հարգալից, նորարար, ընկերասեր: